ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 13-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիր՝ «ԳՀԱՊՁԲ-2020/15-3-ԵՊԲՀ»

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳՀԱՊՁԲ-2020/15-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի փետրվարի 12-ին ժամը՝ 14:58-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2020 թվականի փետրվարի 13-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N1: Հարգելի պատվիրատու, քանի որ Ձեր հայտարարագրած հրավերի 87 չափաբաժնի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է ,,Անիոս,, ֆիրմայի ,,Hexanios G+R,, ախտահանիչ նյութի բնութագրին, իսկ մենք արտադրում ենք այդ նյութի նմանօրինակը, ուստի կցանկանայինք պարզաբանեիք քլորի և ալկոհոլի բացակայության անհրաժեշտությունը:

ՊարզաբանումN1 Պարզաբանման պատասխան.

87-րդ չափաբաժնում հայտարարված Ախտահանիչ խտանյութ՝ նախատեսված Էնդոսկոպների և բժշկական նշանակության առարկաների (ԲՆԱ) ախտահանման, նախամանրէազերծումային մշակման համար ապրանքատեսակի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է տարբեր արտադրողների:

Իսկ ինչ վերաբերվում է քլորի և ալկոհոլի բացակայության անհրաժեշտությանը, ապա՝ գործիքների ախտահանման և նախամանրէազերծումային մշակման գործընթացի փուլում ախտահանիչ նյութի մեջ գործիքների ընկղման ժամանակ ալկոհոլ և քլոր պարունակող նյութերը ցուցաբերում են կենսաբանական

աղտոտվածությունը ֆիքսող հատկություն, ինչպես նաև ունեն կոռոզիա առաջացնելու հատկություն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Մերի Կարապետյանին:

Հեռախոս՝ 011 621 000 (249)

Էլ.փոստ՝ marketinysmu5@gmail.com

«ԳՀԱՊՁԲ-2020/15-3-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով

Նախագահ՝ _____ Լ. Դանիելյան

Անդամներ՝ _____ Մ. Գրիգորյան

_____ Կ.Մկրտչյան

_____ Ա. Հակոբյան

_____ Հ. Սարգսյան